ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ ԱՐԹՈՒՐ ՊՈՂՈՍՅԱՆ

- **ՔԱՂԱՔ /ԵՐԿԻՐ/ԺԱՄԿԵՏ**

Դունհուան (ՉԺՀ), սեպտեմբերի 18-22-ը

- **ՆՊԱՏԱԿԸ**

- **Մասնակցություն Դունհուանում կայացած երկրորդ միջազգային մշակութային ԷՔՍՊՈ-ի ծրագրային միջոցառումներին:**

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Գանսյու նահանգի կառավարության հրավերով 2017 թ. սեպտեմբերի 18-22-ը մեկնեցի Չինաստան, որպես ՀՀ մշակույթի նախարարության պաշտոնական ներկայացուցիչ և պատվավոր հյուր, ներկա գտնվելու Գանսյու նահանգի Դունհուան քաղաքում կայանալիք Երկրորդ միջազգային «Մետաքսի ճանապարհ» մշակութային էքսպո-2017 ծրագրի միջոցառումներին:

Նշյալ լայնածավալ միջոցառման գլխավոր նպատակն էր Մետաքսի ճանապարհի երկրների միջև համագործակցության ամրապնդումը՝ մշակութային համատեղ նախագծերի իրականացմամբ և նոր արդիական տեխնոլոգիաների կիրառմամբ: Հրավիրված էին մասնակցելու մոտ 50 պետությունների պատվիրակություններ, մշակույթի նախարարներ, փոխնախարարներ Հունաստանից, Բոսնիա-Հերցոգովինայից, Կիրգիզիայից, ՌԴ-ից, Տաջիկստանից, Հարավային Կորեայից, Ղազախստանից, Սինգապուրից, Հարավ - արևելյան Ասիայի և աֆրիկյան պետություններից, ՉԺՀ բարձրաստիճան պաշտոնյաներ, Չինաստանում հավատարմագրված օտարերկրյա

դիվանագիտական հաստատությունների ներկայացուցիչներ, դասախոսներ, գործարարներ:

Առաջին անգամ միջոցառումը կայացել էր ՉԺՀ Դունհուան քաղաքում՝ 2016 թվականին:

Սեպտեմբերի 19-ին կայացավ մասնակիցների գրանցումը և միջոցառման պաշտոնական բացման արարողությունը: Բացմանը խոսքով հանդես եկավ ՉԺՀ Գանսյու նահանգի ՉԿԿ առաջին քարտուղարը: Ողջունելով մասնակիցներին, նա նշեց որ Մետաքսի ճանապարհի երկրների միջև համագործակցության գաղափարը առաջ է քաշվել ՉԺՀ նախագահ Սի Ձին Պինի կողմից, և Չինաստանի համար այն կարևոր ուղղություն է: Ելույթներով հանդես եկան նաև ՉԺՀ մշակույթի նախարարը և այլ պաշտոնական անձինք: Երեկոյան կայացավ համերգ ՉԺՀ մշակութային կոլեկտիվների մասնակցությամբ:

Սեպտեմբերի 20-ի առավոտյան սկսվեցին պլենար նիստերը: Ելույթ ունենալով պլենար նիստում՝ ողջունեցի միջոցառման կազմակերպիչներին և ներկաներին, կարևորեցի հայ-չինական մշակութային համագործակցության ներկա բարձր մակարդակը, պատմական անդրադարձ կատարեցի Հայկական բարձրավանդակի տարածքով անցնող Մետաքսի ճանապարհի նշանակությանը և հայտնեցի Հայաստանի Հանրապետության շահագրգռվածությունը մասնակցելու ներկայիս գործընթացներին: Առաջարկեցի մասնակից երկրների հետ միասին պատրաստել և հաջորդ հանդիպմանը ստորագրել մշակութային և զբոսաշրջային համագործակցության վերաբերյալ հուշագիր:

Երեկոյան ՉԺՀ մշակույթի նախարարի հրավերով ներկա գտնվեցի մասնակից պատվիրակությունների ղեկավարների (նախարարներ, փոխնախարարներ) պաշտոնական ընթրիքին, որտեղ ՉԺՀ մշակույթի նախարարի հետ քննարկեցինք մշակութային համագործակցության հարցեր:

Նույն օրը երեկոյան Դունհուանի Կոնգրես պալատում կայացավ վաստակավոր կոլեկտիվ «Հայաստանի պարարվեստի «ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ» պետական համույթի մենահամերգը:

Հաջորդ օրը կայացավ «Մետաքսի ճանապարհ 2017» Երկրորդ միջազգային մշակութային ԷՔՍՊՈ-ի տաղավարների (ցուցահանդեսի) բացման արարողությունը և շրջայցը տաղավարներով: Ցուցահանդեսին ներկայացված էր մի շարք երկրների մշակութային և զբոսաշրջային արտադրանքը:

Նույն օրը երեկոյան կայացավ Երկրորդ միջազգային մշակութային ԷՔՍՊՈ-ի փակման պաշտոնական արարողությունը, որին հաջորդեց «Մետաքսի ճանապարհ 2017» մշակութային ԷՔՍՊՈ-ի գալա համերգը, որտեղ այլ երկրների կոլեկտիվների հետ միասին ելույթ ունեցավ Հայաստանի պարարվեստի «ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ» պետական համույթը:

Սեպտեմբերի 21-ին՝ օրվա առաջին կեսին, մասնակցեցի կազմակերպիչների մշակութային ծրագրին, որի շրջանակում այցելեցի մի շարք պատմամշակութային հուշարձաններ:

Անհրաժեշտ եմ համարում նշել, որ մասնակցությունը Երկրորդ միջազգային մշակութային ԷՔՍՊՈ-ին հնարավորություն ընձեռեց գործընկերների հետ քննարկելու մշակութային համագործակցությանը վերաբերող հարցեր, ինչպես նաև ներկայացնելու Հայաստանը միջազգային հարթակում:

Չինաստան գործուղման ընթացքում հանդիպում ունեցա ՉԺՀ մշակույթի նախարարի հետ, քննարկվեցին երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր: ՉԺՀ մշակույթի նախարարը բարձր գնահատեց ս. թ. սեպտեմբերին Պեկինում կայացած Հայաստանի մշակույթի օրերի ծրագիրը և տեղեկացրեց, որ 2018 թ. ՉԺՀ կազմավորման 70-ամյակի շրջանակներում իրենք պատրաստվում են մի շարք երկրներում կազմակերպել միջոցառումներ: Նախարարին առաջարկեցի 2018թ. ՉԺՀ

մշակույթի օրեր և տոնական միջոցառումներ կազմակերպել Հայաստանում: Նախարարը գոհունակությամբ ընդունեց առաջարկը՝ նշելով, որ իրենք պատրաստ են կազմակերպել միջոցառումներ: Նախարարին տեղեկացրեցի մշակույթի ոլորտում հայչինական համագործակցության մասին, մասնավորապես նշելով Հայաստանում ՉԺՀ դեսպանի աջակցությամբ իրականացվող ծրագրերի մասին (շրջիկ կինոթատրոնների ձեռքբերում, թանգարանային ցուցադրությունների թվայնացում, Հայաստանում Կոնֆուցիոսի կենտրոնի գործունեություն և այլն): Նախարարը գոհունակություն հայտնեց համագործակցության մակարդակից և այն ավելի խորացնելու պատրաստակամություն հայտնեց:

Աշխատանքային հանդիպումներ ունեցա նաև Կիրգիզիայի և Հունաստանի մշակույթի նախարարների և Տաջիկստանի մշակույթի փոխնախարարի հետ: Քննարկվեցին մշակութային համագործակցության հարցեր:

- **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

- ***Մասնակցություն Դունհուանում կայացած երկրորդ միջազգային մշակութային ԷՔՍՊՈ-ի ծրագրային միջոցառումներին:***
- ***Հայ մշակույթի հանրահռչակում արտերկրում (Բարեկամություն պարի անսամբլ)՝ միջազգային լայն լսարանի առաջ:***
- ***Պայմանավորվածություն 2018 թ. ՉԺՀ կազմավորման 70-ամյակի շրջանակներում Հայաստանում տոնական միջոցառումների անցկացման վերաբերյալ:***
- ***Այլ երկրների մշակույթի ոլորտի պատասխանատուների հետ համագործակցության խնդիրների քննարկում:***

ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ՝ Ա. ՊՈՂՈՍՅԱՆ